Հավելված N6
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի հայկական պետական ինստիտուտ»
հիմնադրամի ռեկտորի 2016թվականի
հոկտեմբերի 31-ի N 39 հրամանի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն օրինակելի կանոնադրությունը սահմանում է ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) ֆակուլտետի (այսուհետ՝ ֆակուլտետ) գործունեության իրավական հիմքերը:

1.2 Յուրաքանչյուր ֆակուլտետ սույն օրինակելի կանոնադրության հիման վրա մշակում և ֆակուլտետի խորհրդում ընդունում է իր կանոնադրությունը, որը հաստատվում է ինստիտուտի գիտական խորհրդում:

1.3 Սույն կանոնադրությունը հաստատվում է ինստիտուտի գիտական խորհրդում:

1.4 Սույն կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:

1.5 Ֆակուլտետի կանոնադրության և ֆակուլտետի օրինակելի կանոնադրության դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են օրինակելի կանոնադրության դրույթները:

1.6 Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝

հայերեն՝ _____

ռուսերեն՝ _____

անգլերեն՝ _____

1.7 Ֆակուլտետի գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Ալ.Մանուկյան 11

1.8 Ֆակուլտետը ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր կանոնադրությանը համապատասխան օժտված է իրավունքներով և կրում է պարտականություններ:

1.9 Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինստիտուտի կանոնադրությամբ, իր կանոնադրությամբ, ինչպես նաև ինստիտուտի կառավարման մարմինների, ֆակուլտետի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած իրավական ակտերով:

1.10 Ֆակուլտետն ունի կնիք, իր անվանմամբ դրոշմակնիք՝ (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), սահմանված կարգով կարող է ունենալ նաև պաշտոնաթուղթ (բլանկ), խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

2. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Ֆակուլտետը ինստիտուտի գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանումն է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն մեկ կամ մի քանի մասնագիտություններով:

2.2 Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու որո-շումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ինստիտուտի կանոնադրությանը, ինստիտուտի ներքին իրավական ակտերին և ֆակուլտետի կանոնադրությանը:

3.ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ինստիտուտի կանոնադրությանը և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ:

3.2 Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, իսկ ամենամյա նիստերը՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո՝ ըստ ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցի:

3.3 Խորհրդի նախագահը դեկանն է, որը հրավիրում է խորհրդի նիստերը: Խորհրդի քարտուղարն ի պաշտոնե ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարն է:

3.4 Խորհրդի նիստն իրավազոր է խորհրդի անդամների ցուցակային կազմի երկու երրորդի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեակազմի (քվորումի) բացակայության դեպքում հայտարարվում է խորհրդի նիստի անցկացման նոր ժամանակը՝ նույն օրակարգով: Խորհրդում դեկանի ընտրության և պաշտոնանկության քվեարկությունը փակ, գաղտնի է:

3.5 Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ռեկտորը կամ պրոռեկտորը:

Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, նիստին մասնակցող անդամների անվանացանկը, օրակարգի հարցերը, ելույթների հակիրճ բովանդակությունը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախա գահողը և քարտուղարը, ովքեր պատասխանատու են արձանագրությունը

ճիշտ կազմելու համար: Նիստի օրակարգը և ընդունված որոշումները հինգ աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են հրապարակման ինստիտուտի պաշտոնական կայքում:

3.6 Ֆակուլտետի խորհուրդը՝

1) առաջարկություններ է ներկայացնում ռեկտորին ֆակուլտետի կառուցվածքում գիտահետազոտական ինստիտուտներ ամբիոններ, լաբորատորիաներ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու վերաբերյալ.

2)լուծում է ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ գործունեության հարցեր,

3) ընտրում է ֆակուլտետի ներկայացուցիչներին ինստիտուտի գիտական խորհրդում,

4) քննարկում է ֆակուլտետի ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները,

5) քննարկում է ֆակուլտետի կիսամյակային և տարեկան քննաշրջանների արդյունքնե- րը,

6) սահմանված կարգով մասնակցում է ֆակուլտետի ամբիոնների վարիչների, պրո- ֆեսորադասախոսական համակազմի ընտրությունը՝ նախապես քննարկելով նիստում և տալով համապատասխան եզրակացություն,

7) սահմանված կարգով քննարկում է հայցվող գիտական կոչումը ստանալու երաշխավորության հարցը,

8) ընդունում է ֆակուլտետի զարգացման ծրագիրը,

9) լսում է ֆակուլտետում կատարվող գիտական թեմաների վերաբերյալ հաշվետվութ- յունները, դրամաշնորհների, գիտակրթական գործուղումների վերաբերյալ հաղորդումները,

10) քննարկում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ընդունված որոշումների դեմ բերված բողոքները,

11) առաջարկություններ է ներկայացնում պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, ինստիտուտի շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածությունների վերաբերյալ, ինչպես նաև լուծում է ֆակուլտետի կանոնադրությունից և ինստիտուտի իրավական այլ ակտերից բխող այլ հարցեր:

3.7 Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է դեկանը՝ իր իրա- վասությունների սահմաններում և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան:

3.8 Դեկանն ընտրվում է ինստիտուտի գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Դեկան կարող է ընտրվել այն պրոֆեսորը կամ

դոցենտը, որն ունի գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան: Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում խորհրդում մասնակիցների ձայների կեսից ավելին հավաքած թեկնածուն: Դեկանի պաշտոնին թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և դեկանին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է դեկանի ընտրության ընթացակարգով:

3.9 Ռեկտորը դեկանին պաշտոնի է նշանակում իր հրամանով՝ ընտրությունների արդ-յունքների հիման վրա:

3.10Ֆակուլտետի դեկանը՝

1) կազմակերպում և վերահսկում է ֆակուլտետի գործունեությունը կրթական, գիտա- կան, միջազգային և այլ ոլորտներում,

2) ապահովում է ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդի որոշումների կատարումը,

3) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալների, ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարի թեկնածուներին,

4) սահմանված կարգով համալսարանի ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, նույն կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, տեղափոխման (այլ բուհից կամ այլ մասնագիտությունից), ուսուցման ձևի փոփոխման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ,

5) կազմակերպում է ուսումնական դասացուցակների կազմումը և վերահսկում է դրանց կատարումը,

6) վերահսկում է քննությունների և ստուգարքների անցկացման գործընթացը,

7) իր լիազորությունների շրջանակում խրախուսում, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության է ենթարկում ուսանողներին,

8) լուծում է ֆակուլտետի կանոնադրությունից բխող և ֆակուլտետի ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

3.11 Ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերի քննարկման համար ֆակուլտետում գործում են հանձնախմբեր:

4. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1Ֆակուլտետի կազմում գործում են ամբիոնները, ինչպես նաև կարող են գործել նաև գիտահետազոտական ինստիտուտներ, լաբորատորիաներ, կենտրոններ և գիտակրթական ու այլ ստորաբաժանումներ:

4.2 Ֆակուլտետի ամբիոնները

4.2.1 Ֆակուլտետի հիմնական ստորաբաժանումներն են ամբիոնները: Ամբիոնները ֆակուլտետի կրթագիտական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային

ստորաբաժանումներն են, որոնք միավորում են մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմը, իրականացնում է ուսումնական գործընթաց, ուսունամեթոդական, հետազոտական և կազմակերպչական աշխատանքներ, բարձրորակ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստում, նրանց որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացներ:

4.2.2 Ամբիոնները գործում են ինստիտուտի կանոնադրության, իրավական ակտերի և ֆակուլտետի և ամբիոնների օրինակելի կանոնադրությունների հիման վրա:

4.3 Ամբիոնը ղեկավարում է վարիչը: Ամբիոնի վարիչը կազմակերպում և վերահսկում է ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները, ներկայացնում է ամբիոնը ֆակուլտետի, ինստիտուտի, համաինստիտուտական ստորաբաժանումների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում:

4.4 Ամբիոնի վարիչն ամբիոնի կարծիքն ստանալուց հետո մրցութային հիմունքներով ընտրվում է ինստիտուտի գիտական խորհրդում՝ 5 տարի ժամկետով, փակ, գաղտնի քվեարկությամբ, որից հետո ռեկտորն ամբիոնի վարիչի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր: Ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և ամբիոնի վարիչին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգով:

4.5 Ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնի գործունեության համար: Ամբիոնի վարիչն ըստ սահմանված կարգի տարին մեկ անգամ հաշվետվություն է տալիս ֆակուլտետի խորհրդում: Ամբիոնի աշխատանքների մասին ամբիոնի վարիչի հաշվետվությունների ժամկետները և ձևերը սահմանում է գիտական խորհուրդը:

4.6 Ամբիոնների աշխատանքներն իրականացվում են ամբիոնների աշխատանքային ծրագրերին համապատասխան և ընդգրկում են ուսումնամեթոդական, գիտահետազոտական և աշխատանքի այլ տեսակները:

4.7 Ամբիոնի կրթական և գիտական հարցերը քննարկվում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի նիստերում: Ամբիոնի նիստերին վճռական ձայնի իրավունքով մասնակցում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի հիմնական աշխատողները: Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել դեկանը կամ տեղակալը, ամբիոնի գիտաշխատողները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողները: Ամբիոնի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարեկան ութ անգամ: Ամբիոնի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները ստորագրվում են ամբիոնի վարիչի ու լաբորանտի կողմից:

4.8 Ֆակուլտետի ենթակառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման և գործունեության կարգը, ինչպես նաև իրավասությունը սահմանվում է ֆակուլտետի կանոնադրությամբ:

4.9 Ինստիտուտի ֆակուլտետի գործունեության հիմնական հարցերը քննարկվում են ինստիտուտի գիտական խորհրդի նիստերում: Ինստիտուտի լաբորատորիաների ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողներն այդ նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

5.1 Ֆակուլտետում ուսումնական գործընթացը կազմակերպվում է կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին, ինչպես նաև ինստիտուտի գիտական խորհրդի կողմից 2007թվականի հունվարի 27-ին հաստատված ,,Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգին,, և 2013թվականի հունիսի 28-ին հաստատված ,,Ուսանողների գիտելիքների գնահատման կարգին,,, ինչպես նաև ուսումնական պլաններին, առարկայական ծրագրերին համապատասխան:

5.2 Ուսուցումը կարող է կազմակերպվել առկա, հեռակա, դրսեկության (էքստեռն) և հեռահար:

6.ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

6.1 Ֆակուլտետի աշխատողները ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների դասախոսներն ու գիտաշխատողներն են,, ինչպես նաև ուսումնաօժանդակ անձնակազմը:

Ինստիտուտի հաստիքային ցուցակով ֆակուլտետի համար նախատեսված են պրոֆեսորադասախոսական, գիտական կազմի, ուսումնաօժանդակ անձնակազմի հետևյալ պաշտոնները՝ դեկան, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, դասախոս, ասիստենտ, լաբորատորիայի (կաբինետի) վարիչ, ավագ լաբորանտ, լաբորանտ, ֆակուլտետի քարտուղար, օպերատոր:

6.2 Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկած են պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները և դասախոսները: Ամբիոնի կազմի մեջ մտնում են նաև ասպիրանտները և ուսումնաօժանդակ համակազմը: Ամբիոնը, ելնելով կատարվող կրթական, գիտական, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական աշխատանքների ծավալից ու ձևերից, ըստ սահմանված կարգի մշակում է իր աշխատողների ուսումնական բեռնվածությունը: Ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումն իրականացվում է համաձայն աշխատանքային պայմանագրի, որի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրությունը:

7.ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

7.1 Ֆակուլտետի սովորողը բարձրագույն և հետբուհական կրթության սուբյեկտ է: Սովորողներ են համարվում բուհի ուսուցման կրթական ծրագրերով բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար ռեկտորի կողմից հրամանագրված անձինք:

7.2 Ինստիտուտի սովորողները կարող են իրենց հայեցողությամբ, ըստ հակումների եւ պահանջմունքների, ընտրել մասնագիտություն, բարձրագույն ուսումնական հաստատության տեսակը եւ ուսուցման ձեւը, տեղափոխվել բարձրագույն ուսումնական այլ հաստատություն (ներառյալ՝ օտարերկրյա պետությունների), զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթությունը, բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան՝ լիիրավ մասնակցել բարձրագույն ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինների աշխատանքներին:

7.3 Սովորողն իրավունք ունի՝

1) ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր եւ տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են ֆակուլտետը (ուսումնական ստորաբաժանումը) եւ ամբիոնը.

2) մասնակցելու իր կրթության բովանդակության ձեւավորմանը (ուսումնական դասընթացների եւ մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները.

3) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ այդ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.

4) մասնակցելու ինստիտուտի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ նախատեսված օրենքով կամ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ.

5) անվճար օգտվելու ինստիտուտի գրադարանից, մարզասրահներից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական եւ այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին եւ սիմպոզիումներին.

6) բողոքարկելու ինստիտուտի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

7) օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

8) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ եւ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի, ներառյալ՝ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաեւ ուսանողական վարկ.

9) ծանոթանալու ինստիտուտի կանոնադրությանը եւ նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր ինստիտուտի հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ.

10) լիազորված մարմնի սահմանած կարգով անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ մինչեւ մեկ տարի ժամկետով, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

11) ուսուցման առկա ձեւով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տեւողությամբ.

12) փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, ներառյալ՝ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի.

13) ուսման բարձր առաջադիմության եւ գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական եւ (կամ) նյութական խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ բարձրագույն ուսումնական հաստատության սահմանած կարգով:

7.4 Կրթությունն ընդհատած նախկին ուսանողն իրավունք ունի վերականգնվելու բարձրագույն ուսումնական հաստատությունում:

7.5 Ինստիտուտի սովորողը պարտավոր է կատարել ինստիտուտի կանոնադրությամբ եւ ներքին կարգապահության կանոններով սահմանված պարտականությունները, որոնց խախտման դեպքում նրա նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ ինստիտուտից հեռացնելը:

Արգելվում է սովորողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

7.6 Ինստիտուտի ուսանողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում եւ ուսանողական այլ կազմակերպություններում, որոնց ստեղծման եւ գործունեության կարգը սահմանվում է կանոնադրությամբ:

8. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1 Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմակերպվում, կամ լուծարվում է ինստիտուտի խորհրդի որոշմամբ:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 Սույն կանոնադրությունը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Ուժը կորցրած ճանաչել ,,Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ,, պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդում 30.04.2015թվականին հաստատված ,,Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ,, պետական ոչ առևտրային կազմակերպության ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը,,:

Հավելված N7
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի հայկական պետական ինստիտուտ»
հիմնադրամի ռեկտորի 2016թվականի
հոկտեմբերի 31-ի N 39 հրամանի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնադրությունը սահմանում է ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաների ֆակուլտետի գործունեության իրավական հիմքերը:

1.2 Ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաների ֆակուլտետի (այսուհետ՝ ֆակուլտետ) կանոնադրությունը մշակվում է ինստիտուտի ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա և հաստատվում է ինստիտուտի գիտական խորհրդում:

1.3 Սույն կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:

1.4 Ֆակուլտետի կանոնադրության և ֆակուլտետի օրինակելի կանոնադրության դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են օրինակելի կանոնադրության դրույթները:

1.5 Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝

հայերեն՝ Ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաների ֆակուլտետ

ռուսերեն՝ Факультет физического воспитания и оздоровительных технологий

անգլերեն՝ Faculty of Phyzical Education and Health Technologies

1.6 Ֆակուլտետի գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Ալ.Մանուկյան 11

1.7 Ֆակուլտետը ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր կանոնադրությանը համապատասխան օժտված է իրավունքներով և կրում է պարտականություններ:

1.8 Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինստիտուտի կանոնադրությամբ, իր կանոնադրությամբ, ինչպես նաև ինստիտուտի կառավարման մարմինների, ֆակուլտետի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած իրավական ակտերով:

1.9 Ֆակուլտետն ունի կնիք, իր անվանմամբ դրոշմակնիք՝ (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), սահմանված կարգով կարող է ունենալ նաև պաշտոնաթուղթ (բլանկ), խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

2. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Ֆակուլտետը ինստիտուտի գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանումն է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն մեկ կամ մի քանի մասնագիտություններով:

2.2 Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ինստիտուտի կանոնադրությանը, ինստիտուտի ներքին իրավական ակտերին և ֆակուլտետի կանոնադրությանը:

3.ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ինստիտուտի կանոնադրությանը և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ:

3.2 Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, իսկ ամենամյա նիստերը՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո՝ ըստ ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցի:

3.3 Խորհրդի նախագահը դեկանն է, որը հրավիրում է խորհրդի նիստերը: Խորհրդի քարտուղարն ի պաշտոնե ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարն է:

3.4 Խորհրդի նիստն իրավազոր է խորհրդի անդամների ցուցակային կազմի երկու երրորդի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեակազմի (քվորումի) բացակայության դեպքում հայտարարվում է խորհրդի նիստի անցկացման նոր ժամանակը՝ նույն օրակարգով: Խորհրդում դեկանի ընտրության և պաշտոնանկության քվեարկությունը փակ, գաղտնի է:

3.5 Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ռեկտորը կամ պրոռեկտորը:

Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, նիստին մասնակցող անդամների անվանացանկը, օրակարգի հարցերը, ելույթների հակիրճ բովանդակությունը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և քարտուղարը, ովքեր պատասխանատու են արձանագրությունը

ճիշտ կազմելու համար: Նիստի օրակարգը և ընդունված որոշումները հինգ աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են հրապարակման ինստիտուտի պաշտոնական կայքում:

3.6 Ֆակուլտետի խորհուրդը՝

1) առաջարկություններ է ներկայացնում ռեկտորին ֆակուլտետի կառուցվածքում գիտահետազոտական ինստիտուտներ ամբիոններ, լաբորատորիաներ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու վերաբերյալ.

2)լուծում է ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ գործունեության հարցեր,

3) ընտրում է ֆակուլտետի ներկայացուցիչներին ինստիտուտի գիտական խորհրդում,

4) քննարկում է ֆակուլտետի ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները,

5) քննարկում է ֆակուլտետի կիսամյակային և տարեկան քննաշրջանների արդյունքները,

6) սահմանված կարգով մասնակցում է ֆակուլտետի ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրությունը՝ նախապես քննարկելով նիստում և տալով համապատասխան եզրակացություն,

7) սահմանված կարգով քննարկում է հայցվող գիտական կոչումը ստանալու երաշխավորության հարցը,

8) ընդունում է ֆակուլտետի զարգացման ծրագիրը,

9) լսում է ֆակուլտետում կատարվող գիտական թեմաների վերաբերյալ հաշվետվութ-յունները, դրամաշնորհների, գիտակրթական գործուղումների վերաբերյալ հաղորդումները,

10) քննարկում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ընդունված որոշումների դեմ բերված բողոքները,

11) առաջարկություններ է ներկայացնում պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, ինստիտուտի շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածությունների վերաբերյալ, ինչպես նաև լուծում է ֆակուլտետի կանոնադրությունից և ինստիտուտի իրավական այլ ակտերից բխող այլ հարցեր:

3.7 Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է դեկանը՝ իր իրա-վասությունների սահմաններում և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան:

3.8 Դեկանն ընտրվում է ինստիտուտի գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Դեկան կարող է ընտրվել այն պրոֆեսորը կամ

դոցենտը, որն ունի գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան: Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում խորհրդում մասնակիցների ձայների կեսից ավելին հավաքած թեկնածուն: Դեկանի պաշտոնին թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և դեկանին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է դեկանի ընտրության ընթացակարգով:

3.9 Ռեկտորը դեկանին պաշտոնի է նշանակում իր հրամանով՝ ընտրությունների արդ-յունքների հիման վրա:

3.10Ֆակուլտետի դեկանը՝

1) կազմակերպում և վերահսկում է ֆակուլտետի գործունեությունը կրթական, գիտա- կան, միջազգային և այլ ոլորտներում,

2) ապահովում է ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդի որոշումների կատարումը,

3) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալների, ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարի թեկնածուներին,

4) սահմանված կարգով համալսարանի ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, նույն կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, տեղափոխման (այլ բուհից կամ այլ մասնագիտությունից), ուսուցման ձևի փոփոխման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ,

5) կազմակերպում է ուսումնական դասացուցակների կազմումը և վերահսկում է դրանց կատարումը,

6) վերահսկում է քննությունների և ստուգարքների անցկացման գործընթացը,

7) իր լիազորությունների շրջանակում խրախուսում, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության է ենթարկում ուսանողներին,

8) լուծում է ֆակուլտետի կանոնադրությունից բխող և ֆակուլտետի ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

3.11 Ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերի քննարկման համար ֆակուլտետում գործում են հանձնախմբեր:

4. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1 Ֆակուլտետի կազմում գործում են ամբիոնները, ինչպես նաև կարող են գործել նաև գիտահետազոտական ինստիտուտներ, լաբորատորիաներ, կենտրոններ և գիտակրթական ու այլ ստորաբաժանումներ:

4.2 Ֆակուլտետի ամբիոնները՝

4.2.1 Ֆակուլտետի հիմնական ստորաբաժանումներն են ամբիոնները: Ամբիոնները ֆակուլտետի կրթագիտական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային

ստորաբաժանումներն են, որոնք միավորում են մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմը, իրականացնում է ուսումնական գործընթաց, ուսունամեթոդական, հոտազոտական և կազմակերպչական աշխատանքներ, բարձրորակ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստում, նրանց որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացներ:

4.2.2 Ամբիոնները գործում են ինստիտուտի կանոնադրության, իրավական ակտերի, ֆակուլտետի և ամբիոնների օրինակելի կանոնադրությունների հիման վրա:

4.3 Ամբիոնը ղեկավարում է վարիչը: Ամբիոնի վարիչը կազմակերպում և վերահսկում է ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները, ներկայացնում է ամբիոնը ֆակուլտետի, ինստիտուտի, համաինստիտուտական ստորաբաժանումների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում:

4.4 Ամբիոնի վարիչն ամբիոնի կարծիքն ստանալուց հետո մրցութային հիմունքներով ընտրվում է ինստիտուտի գիտական խորհրդում՝ 5 տարի ժամկետով, փակ, գաղտնի քվեարկությամբ, որից հետո ռեկտորն ամբիոնի վարիչի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր: Ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և ամբիոնի վարիչին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգով:

4.5Ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնի գործունեության համար: Ամբիոնի վարիչն ըստ սահմանված կարգի տարին մեկ անգամ հաշվետվություն է տալիս ֆակուլտետի գիտական խորհրդում: Ամբիոնի աշխատանքների մասին ամբիոնի վարիչի հաշվետվությունների ժամկետները և ձևերը սահմանում է գիտական խորհուրդը:

4.6 Ամբիոնների աշխատանքներն իրականացվում են ամբիոնների աշխատանքային ծրագրերին համապատասխան և ընդգրկում են ուսումնամեթոդական, գիտահետազոտական և աշխատանքի այլ տեսակները:

4.7 Ամբիոնի կրթական և գիտական հարցերը քննարկվում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի նիստերում: Ամբիոնի նիստերին վճռական ձայնի իրավունքով մասնակցում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի հիմնական աշխատողները: Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել դեկանը կամ տեղակալը, ամբիոնի գիտաշխատողները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողները: Ամբիոնի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարեկան ութ անգամ: Ամբիոնի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները ստորագրվում են ամբիոնի վարիչի ու լաբորանտի կողմից:

4.8 Ֆակուլտետի կազմում գործում են՝

1) Կինեզիոլոգիայի
2) Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և անատոմիայի
3) Մարզախաղերի
4) Աթլետիկայի
5) Ֆիզիոլոգիայի և սպորտ բժշկության
6) Լեզուների
7) ՖԴՏ և մեթոդիկայի

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

5.1 Ֆակուլտետում ուսումնական գործընթացը կազմակերպվում է կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին, ինչպես նաև ինստիտուտի գիտական խորհրդի կողմից 2007թվականի հունվարի 27-ին հաստատված ,,Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգին,, և 2013թվականի հունիսի 28-ին հաստատված ,,Ուսանողների գիտելիքների գնահատման կարգին,,, ինչպես նաև ուսումնական պլաններին, առարկայական ծրագրերին համապատասխան:

5.2 Ուսուցումը կարող է կազմակերպվել առկա, հեռակա, դրսեկության (էքստեռն) և հեռահար:

6.ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

6.1 Ֆակուլտետի աշխատողները ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների դասախոսներն ու գիտաշխատողներն են,, ինչպես նաև ուսումնաօժանդակ անձնակազմը:

Ինստիտուտի հաստիքային ցուցակով ֆակուլտետի համար նախատեսված են պրոֆեսորադասախոսական, գիտական կազմի, ուսումնաօժանդակ անձնակազմի հետևյալ պաշտոնները՝ դեկան, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, դասախոս, ասիստենտ, լաբորատորիայի (կաբինետի) վարիչ, ավագ լաբորանտ, լաբորանտ, ֆակուլտետի քարտուղար, օպերատոր:

6.2 Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկած են պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները և դասախոսները: Ամբիոնի կազմի մեջ մտնում են նաև ասպիրանտները և ուսումնաօժանդակ համակազմը: Ամբիոնը, ելնելով կատարվող կրթական, գիտական, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական աշխատանքների ծավալից ու ձևերից, ըստ սահմանված կարգի մշակում է իր աշխատողների ուսումնական բեռնվածությունը: Ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումն իրականացվում է համաձայն աշխատանքային պայմանագրի, որի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրությունը:

7.ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

7.1 Ֆակուլտետի սովորողը բարձրագույն և հետբուհական կրթության սուբյեկտ է: Սովորողներ են համարվում բուհի ուսուցման կրթական ծրագրերով բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար ռեկտորի կողմից հրամանագրված անձինք:

7.2 Ինստիտուտի սովորողները կարող են իրենց հայեցողությամբ, ըստ հակումների եւ պահանջմունքների, ընտրել մասնագիտություն, բարձրագույն ուսումնական հաստատության տեսակը եւ ուսուցման ձեւը, տեղափոխվել բարձրագույն ուսումնական այլ հաստատություն (ներառյալ՝ օտարերկրյա պետությունների), զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթությունը, բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան՝ լիիրավ մասնակցել բարձրագույն ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինների աշխատանքներին:

7.3 Սովորողն իրավունք ունի՝

1) ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր եւ տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են ֆակուլտետը (ուսումնական ստորաբաժանումը) եւ ամբիոնը.

2) մասնակցելու իր կրթության բովանդակության ձեւավորմանը (ուսումնական դասընթացների եւ մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները.

3) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ այդ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.

4) մասնակցելու ինստիտուտի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ նախատեսված օրենքով կամ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ.

5) անվճար օգտվելու ինստիտուտի գրադարանից, մարզասրահներից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական եւ այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին եւ սիմպոզիումներին.

6) բողոքարկելու ինստիտուտի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

7) օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

8) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ եւ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի, ներառյալ՝ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաեւ ուսանողական վարկ.

9) ծանոթանալու ինստիտուտի կանոնադրությանը եւ նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր ինստիտուտի հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ.

10) լիազորված մարմնի սահմանած կարգով անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ մինչեւ մեկ տարի ժամկետով, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

11) ուսուցման առկա ձեւով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տեւողությամբ.

12) փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, ներառյալ՝ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի.

13) ուսման բարձր առաջադիմության եւ գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական եւ (կամ) նյութական խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ բարձրագույն ուսումնական հաստատության սահմանած կարգով:

7.4 Կրթությունն ընդհատած նախկին ուսանողն իրավունք ունի վերականգնվելու բարձրագույն ուսումնական հաստատությունում:

7.5 Ինստիտուտի սովորողը պարտավոր է կատարել ինստիտուտիկանոնադրությամբ եւ ներքին կարգապահության կանոններով սահմանված պարտականությունները, որոնց խախտման դեպքում նրա նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ բարձրագույն ուսումնական հաստատությունից հեռացնելը:

Արգելվում է սովորողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

7.6 Ինստիտուտի ուսանողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում եւ ուսանողական այլ կազմակերպություններում, որոնց ստեղծման եւ գործունեության կարգը սահմանվում է կանոնադրությամբ:

8. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ,ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1 Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 Սույն կանոնադրությունը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Ուժը կորցրած ճանաչել ,,Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ,, պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդում 30.04.2015թվականին հաստատված ,,Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ,, պետական ոչ առևտրային կազմակերպության մարզաառողջարարական ֆակուլտետի կանոնադրությունը,,:

Հավելված N8

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի հայկական պետական ինստիտուտ»
հիմնադրամի ռեկտորի 2016թվականի
հոկտեմբերի 31-ի N 39 հրամանի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնադրությունը սահմանում է ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետի գործունեության իրավական հիմքերը:

1.2 Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետի (այսուհետ՝ ֆակուլտետ) կանոնադրությունը մշակվում է ինստիտուտի ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա և հաստատվում է ինստիտուտի գիտական խորհրդում:

1.3 Սույն կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:

1.4 Ֆակուլտետի կանոնադրության և ֆակուլտետի օրինակելի կանոնադրության դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են օրինակելի կանոնադրության դրույթները:

1.5 Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝

հայերեն՝ Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետ

ռուսերեն՝ _____

անգլերեն՝ _____

1.6 Ֆակուլտետի գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Ալ.Մանուկյան 11

1.7 Ֆակուլտետը ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր կանոնադրությանը համապատասխան օժտված է իրավունքներով և կրում է պարտականություններ:

1.8 Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինստիտուտի կանոնադրությամբ, իր կանոնադրությամբ, ինչպես նաև ինստիտուտի կառավարման մարմինների, ֆակուլտետի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած իրավական ակտերով:

1.9 Ֆակուլտետն ունի կնիք, իր անվանմամբ դրոշմակնիք՝ (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), սահմանված կարգով կարող է ունենալ նաև պաշտոնաթուղթ (բլանկ), խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

2. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Ֆակուլտետը ինստիտուտի գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանումն է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն մեկ կամ մի քանի մասնագիտություններով:

2.2 Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ինստիտուտի կանոնադրությանը, ինստիտուտի ներքին իրավական ակտերին և ֆակուլտետի կանոնադրությանը:

3.ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ինստիտուտի կանոնադրությանը և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ:

3.2 Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, իսկ ամենամյա նիստերը՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո՝ ըստ ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցի:

3.3 Խորհրդի նախագահը դեկանն է, որը հրավիրում է խորհրդի նիստերը: Խորհրդի քարտուղարն ի պաշտոնե ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարն է:

3.4 Խորհրդի նիստն իրավազոր է խորհրդի անդամների ցուցակային կազմի երկու երրորդի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեակազմի (քվորումի) բացակայության դեպքում հայտարարվում է խորհրդի նիստի անցկացման նոր ժամանակը՝ նույն օրակարգով: Խորհրդում դեկանի ընտրության և պաշտոնանկության քվեարկությունը փակ, գաղտնի է:

3.5 Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ռեկտորը կամ պրոռեկտորը:

Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, նիստին մասնակցող անդամների անվանացանկը, օրակարգի հարցերը, ելույթների հակիրճ բովանդակությունը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և քարտուղարը, ովքեր պատասխանատու են արձանագրությունը

ճիշտ կազմելու համար: Նիստի օրակարգը և ընդունված որոշումները հինգ աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են հրապարակման ինստիտուտի պաշտոնական կայքում:

3.6 Ֆակուլտետի խորհուրդը՝

1) առաջարկություններ է ներկայացնում ռեկտորին ֆակուլտետի կառուցվածքում գիտահետազոտական ինստիտուտներ ամբիոններ, լաբորատորիաներ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու վերաբերյալ.

2)լուծում է ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ գործունեության հարցեր,

3) ընտրում է ֆակուլտետի ներկայացուցիչներին ինստիտուտի գիտական խորհրդում,

4) քննարկում է ֆակուլտետի ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները,

5) քննարկում է ֆակուլտետի կիսամյակային և տարեկան քննաշրջանների արդյունքները,

6) սահմանված կարգով մասնակցում է ֆակուլտետի ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրությունը՝ նախապես քննարկելով նիստում և տալով համապատասխան եզրակացություն,

7) սահմանված կարգով քննարկում է հայցվող գիտական կոչումը ստանալու երաշխավորության հարցը,

8) ընդունում է ֆակուլտետի զարգացման ծրագիրը,

9) լսում է ֆակուլտետում կատարվող գիտական թեմաների վերաբերյալ հաշվետվությունները, դրամաշնորհների, գիտակրթական գործուղումների վերաբերյալ հաղորդումները,

10) քննարկում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ընդունված որոշումների դեմ բերված բողոքները,

11) առաջարկություններ է ներկայացնում պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, ինստիտուտի շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածությունների վերաբերյալ, ինչպես նաև լուծում է ֆակուլտետի կանոնադրությունից և ինստիտուտի իրավական այլ ակտերից բխող այլ հարցեր:

3.7 Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է դեկանը՝ իր իրավասությունների սահմաններում և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան:

3.8 Դեկանն ընտրվում է ինստիտուտի գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Դեկան կարող է ընտրվել այն պրոֆեսորը կամ

դոցենտը, որն ունի գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան: Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում խորհրդում մասնակիցների ձայների կեսից ավելին հավաքած թեկնածուն: Դեկանի պաշտոնին թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և դեկանին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է դեկանի ընտրության ընթացակարգով:

3.9 Ռեկտորը դեկանին պաշտոնի է նշանակում իր հրամանով՝ ընտրությունների արդ-յունքների հիման վրա:

3.10Ֆակուլտետի դեկանը՝

1) կազմակերպում և վերահսկում է ֆակուլտետի գործունեությունը կրթական, գիտական, միջազգային և այլ ոլորտներում,

2) ապահովում է ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդի որոշումների կատարումը,

3) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալների, ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարի թեկնածուներին,

4) սահմանված կարգով համալսարանի ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, նույն կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, տեղափոխման (այլ բուհից կամ այլ մասնագիտությունից), ուսուցման ձևի փոփոխման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ,

5) կազմակերպում է ուսումնական դասացուցակների կազմումը և վերահսկում է դրանց կատարումը,

6) վերահսկում է քննությունների և ստուգարքների անցկացման գործընթացը,

7) իր լիազորությունների շրջանակում խրախուսում, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության է ենթարկում ուսանողներին,

8) լուծում է ֆակուլտետի կանոնադրությունից բխող և ֆակուլտետի ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

3.11 Ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերի քննարկման համար ֆակուլտետում գործում են հանձնախմբեր:

4. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1Ֆակուլտետի կազմում գործում են ամբիոնները, ինչպես նաև կարող են գործել նաև գիտահետազոտական ինստիտուտներ, լաբորատորիաներ, կենտրոններ և գիտակրթական ու այլ ստորաբաժանումներ:

4.2 Ֆակուլտետի ամբիոնները

4.2.1 Ֆակուլտետի հիմնական ստորաբաժանումներն են ամբիոնները: Ամբիոնները ֆակուլտետի կրթագիտական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային

ստորաբաժանումներն են, որոնք միավորում են մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմը, իրականացնում է ուսումնական գործընթաց, ուսունամեթոդական, հոտազոտական և կազմակերպչական աշխատանքներ, բարձրորակ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստում, նրանց որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացներ:

4.2.2 Ամբիոնները գործում են ինստիտուտի կանոնադրության, իրավական ակտերի, ֆակուլտետի և ամբիոնների օրինակելի կանոնադրությունների հիման վրա:

4.3 Ամբիոնը ղեկավարում է վարիչը: Ամբիոնի վարիչը կազմակերպում և վերահսկում է ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները, ներկայացնում է ամբիոնը ֆակուլտետի, ինստիտուտի, համաինստիտուտական ստորաբաժանումների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում:

4.4 Ամբիոնի վարիչն ամբիոնի կարծիքն ստանալուց հետո մրցութային հիմունքներով ընտրվում է ինստիտուտի գիտական խորհրդում՝ 5 տարի ժամկետով, փակ, գաղտնի քվեարկությամբ, որից հետո ռեկտորն ամբիոնի վարիչի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր: Ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և ամբիոնի վարիչին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգով:

4.5Ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնի գործունեության համար: Ամբիոնի վարիչն ըստ սահմանված կարգի տարին մեկ անգամ հաշվետվություն է տալիս ֆակուլտետի գիտական խորհրդում: Ամբիոնի աշխատանքների մասին ամբիոնի վարիչի հաշվետվությունների ժամկետները և ձևերը սահմանում է գիտական խորհուրդը:

4.6 Ամբիոնների աշխատանքներն իրականացվում են ամբիոնների աշխատանքային ծրագրերին համապատասխան և ընդգրկում են ուսումնամեթոդական, գիտահետազոտական և աշխատանքի այլ տեսակները:

4.7 Ամբիոնի կրթական և գիտական հարցերը քննարկվում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի նիստերում: Ամբիոնի նիստերին վճռական ձայնի իրավունքով մասնակցում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի հիմնական աշխատողները: Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել դեկանը կամ տեղակալը, ամբիոնի գիտաշխատողները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողները: Ամբիոնի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարեկան ութ անգամ: Ամբիոնի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները ստորագրվում են ամբիոնի վարիչի ու լաբորանտի կողմից:

4.8 Ֆակուլտետի կազմում գործում են

1) Ըմբշամարտի
2) Ծանրամարտի, բռնցքամարտի, սուսերամարտի
3) Կիրառական մարզաձևերի և լողի
4) Մարմնամարզությանև սպորտայինպարեր
5) Մարզական լրագրության և շախմատ
6) Սպորտային մենեջմենտի և հասարակական գիտությունների
7) Սպորտի մանկավարժության և հոգեբանության

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

5.1 Ֆակուլտետում ուսումնական գործընթացը կազմակերպվում է կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին, ինչպես նաև ինստիտուտի գիտական խորհրդի կողմից 2007թվականի հունվարի 27-ին հաստատված ,,Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգին,, և 2013թվականի հունիսի 28-ին հաստատված ,,Ուսանողների գիտելիքների գնահատման կարգին,,, ինչպես նաև ուսումնական պլաններին, առարկայական ծրագրերին համապատասխան:

5.2 Ուսուցումը կարող է կազմակերպվել առկա, հեռակա, դրսեկության (էքստեռն) և հեռահար:

6.ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

6.1 Ֆակուլտետի աշխատողները ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների դասախոսներն ու գիտաշխատողներն են,, ինչպես նաև ուսումնաօժանդակ անձնակազմը:

Ինստիտուտի հաստիքային ցուցակով ֆակուլտետի համար նախատեսված են պրոֆեսորադասախոսական, գիտական կազմի, ուսումնաօժանդակ անձնակազմի հետևյալ պաշտոնները՝ դեկան, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, դասախոս, ասիստենտ, լաբորատորիայի (կաբինետի) վարիչ, ավագ լաբորանտ, լաբորանտ, ֆակուլտետի քարտուղար, օպերատոր:

6.2 Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկած են պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները և դասախոսները: Ամբիոնի կազմի մեջ մտնում են նաև ասպիրանտները և ուսումնաօժանդակ համակազմը: Ամբիոնը, ելնելով կատարվող կրթական, գիտական, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական աշխատանքների ծավալից ու ձևերից, ըստ սահմանված կարգի մշակում է իր աշխատողների ուսումնական

բեռնվածությունը: Ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումն իրականացվում է համաձայն աշխատանքային պայմանագրի, որի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրությունը:

7.ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

7.1 Ֆակուլտետի սովորողը բարձրագույն և հետբուհական կրթության սուբյեկտ է: Սովորողներ են համարվում բուհի ուսուցման կրթական ծրագրերով բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար ռեկտորի կողմից հրամանագրված անձինք:

7.2 Ինստիտուտի սովորողները կարող են իրենց հայեցողությամբ, ըստ հակումների եւ պահանջմունքների, ընտրել մասնագիտություն, բարձրագույն ուսումնական հաստատության տեսակը եւ ուսուցման ձեւը, տեղափոխվել բարձրագույն ուսումնական այլ հաստատություն (ներառյալ՝ օտարերկրյա պետությունների), զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթությունը, բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան՝ լիիրավ մասնակցել բարձրագույն ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինների աշխատանքներին:

7.3 Սովորողն իրավունք ունի՝

1) ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր եւ տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են ֆակուլտետը (ուսումնական ստորաբաժանումը) եւ ամբիոնը.

2) մասնակցելու իր կրթության բովանդակության ձեւավորմանը (ուսումնական դասընթացների եւ մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները.

3) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ այդ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.

4) մասնակցելու ինստիտուտի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ նախատեսված օրենքով կամ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ.

5) անվճար օգտվելու ինստիտուտի գրադարանից, մարզասրահներից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական եւ այլ

ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին եւ սիմպոզիումներին.

6) բողոքարկելու ինստիտուտի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

7) օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

8) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ եւ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի, ներառյալ՝ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաեւ ուսանողական վարկ.

9) ծանոթանալու ինստիտուտի կանոնադրությանը եւ նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր ինստիտուտի հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ.

10) լիազորված մարմնի սահմանած կարգով անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ մինչեւ մեկ տարի ժամկետով, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

11) ուսուցման առկա ձեւով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տեւողությամբ.

12) փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, ներառյալ՝ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի.

13) ուսման բարձր առաջադիմության եւ գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական եւ (կամ) նյութական խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ բարձրագույն ուսումնական հաստատության սահմանած կարգով:

7.4 Կրթությունն ընդհատած նախկին ուսանողն իրավունք ունի վերականգնվելու բարձրագույն ուսումնական հաստատությունում:

7.5 Ինստիտուտի սովորողը պարտավոր է կատարել ինստիտուտիկանոնադրությամբ եւ ներքին կարգապահության կանոններով սահմանված պարտականությունները, որոնց խախտման դեպքում նրա նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ բարձրագույն ուսումնական հաստատությունից հեռացնելը:

Արգելվում է սովորողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

7.6 Ինստիտուտի ուսանողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում եւ ուսանողական այլ կազմակերպություններում, որոնց ստեղծման եւ գործունեության կարգը սահմանվում է կանոնադրությամբ:

8. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ,ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1 Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 Սույն կանոնադրությունը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Ուժը կորցրած ճանաչել ,,Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ,, պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդում 30.04.2015թվականին հաստատված ,,Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ,, պետական ոչ առևտրային կազմակերպության մարզչամանկավարժական ֆակուլտետի կանոնադրությունը,,: